



ՍՐԲՈՑ ՂԵՎՈՆԴՅԱՆՑ ՏՈՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՒՌԻՍ

Փետրվարի 11-ին՝ երեքշաբթի.—Տօն Սրբոց Ղևոնդյանց քահանայից:

Սրբոց Ղևոնդյանց տոնը՝ տոնն է մի խումբ այն հոգևորականների, որոնք Ե դարի կեսին հայոց պատմության նշանակալից մեկ դեպքի՝ Վարդանանց հերոսամարտի ոգեշնչողները և ղեկավարները հանդիսացան՝ կանգնած հայրենակներ, ուխտապահ նախարարների կողքին:

Հոգևորականների այդ հույլի մեջ ակնառու դեմքը հանդիսացավ Ղևոնդ երեցը, իր բոլոր եկեղեցապիտոյությամբ, հայրենասիրությամբ, հավատքով և արիությամբ, որի անունով և այդ խումբը անվանվեց Ղևոնդյանց խումբ:

Հայ եկեղեցին ու ժողովուրդը՝ բարձր գնահատելով Ղևոնդյանց նահատակությունը, սրբացրեց նրանց:

Եվ ահա 15 դարեր շարունակ, մեր եկեղեցում Սրբոց Ղևոնդյանց տոնը համարվում է քահանայից տոն՝ հայ քահանայի տոնը: Եվ դա իզուր չէ: 15 դարեր շարունակ հայ եկեղեցին և հայ ժողովուրդը յուրաքանչյուր քահանայի մեջ տեսել և ճանաչել է Ղևոնդ երեցին: Տեսել է Ղևոնդյանց հայրենասիրությունը, հավատքը, նվիրումը, զոհողության ոգին և նահատակության պատրաստականությունը:

Ամեն տարի Վարդանանց տոնից երկու օր առաջ մեր եկեղեցին կատարում է Սրբոց Ղևոնդյանց տոնը, որոնց նահատակությամբ «պայծառացան եկեղեցիք Հայաստանեայց»:

Սրբոց Ղևոնդյանց քահանայից տոնը այս տարի էլ Մայր Աթոռում կատարվեց ավանդական հանդիսությամբ:

Այս երկրորդ տարին է, որ Սրբոց Ղևոնդյանց տոնի առթիվ Մայր Աթոռ է հրավիրվում հայրենիքի և ներքին թեմերի քահանայական դասը:

Մեր նկատմամբ ունեցած հայրական վերաբերմունքի և այս գեղեցիկ նախաձեռնության համար պարտական ենք Վեհափառ Հայրապետին: Ն. Ս. Օծության բարեհաճ արտոնությամբ՝ տ. Հուսիկ եպս. Սանթրոքյանի գլխավորությամբ կազմվում է մասնավոր հանձնախումբ՝ պատշաճ կարևորությամբ նշելու քահանայից տոնը:

Այս առթիվ հրավիրագրեր են ուղարկվում բոլոր թեմերին, որոնց ի պատասխան փետրվարի 10-ին, երկուշաբթի օրը, երեկոյան, Մայր Աթոռ են ժամանում մոտ հիսուն քահանա հայրեր:

Նախատոնակ.—Փետրվարի 10-ին, երկուշաբթի օրը, երեկոյան ժամը 17-ին, Վեհափառ Հայրապետը թափորով առաջնորդվում է Մայր տաճար, ուր նախագահում է երեկոյան ժամերգության և Ղևոնդյանց արարողություններին:

Նախատոնակից առաջ գեր. տ. Հուսիկ եպս. Սանթրոքյանը անդրադառնում է Սրբոց Ղևոնդյանց տոնի խորհրդին, բարի գալուստ մաղթում քահանա հայրերին Մայր Աթոռ ու Հջմիածին ժամանման առթիվ և շնորհակալություն է հայտնում Վեհափառ Հայրապետին՝ իր բարեհաճ արտոնության համար:

Հավարտ նախատոնակի, Վեհափառ Հայրապետը քահանայական թափորով առաջնորդվում է Վեհարան, ուր իր հայրապետական օրհնությունը բաշխում քահանա հայրերին:

Ժամը 20-ին հյուրերը ընթրում են Մայր Աթոռի միաբանական սեղանատանը, որից հետո, ժամը 20.30-ին, Վեհարանի հանդիսությանը դասիճնում դիտում են երկու կինոնկար՝ Գևորգ 2 կաթողիկոսի վերջին օծումն ու թաղումը և Երևանի 2750-ամյակի առթիվ նկարահանված «Էրեբունի—Երեվան» կինոնկարը:

Ս. պատարագ և քարոզ.—Փետրվարի 11-ին, առավոտյան ժամը 8-ին, բոլոր քահանաների մասնակցությամբ կատարվեց առավոտյան ժամերգությունը և ապա մատուցվեց ս. պատարագ, որին ներկա եղավ Վեհափառ Հայրապետը:

Պատարագեց Ռոստովի հոգևոր հովիվ, ծերունագարդ արժ. տ. Մկրտիչ ավագ քնն. Չորչոփյանը:

Քարոզեց՝ ժնկից որպես հյուր Մայր Աթոռում գտնվող հոգ. տ. Օշին վրդ. Նիկոլյանը՝ «Զմայիի, հրճուի, զուարճանալ, ցրե՜ծալ խայտալից բերկրանօք լանսպառ ուրախությոնսն» ըմպելով զուղիս փափկությունցն Աստուծոյ՝ օրհնության շնորհիւս» քննարկով:

Հավարտ ս. պատարագի, Մայր Աթոռի միաբանությունը և քահանա հայրերը ժամը 12.30-ին հավաքվեցին հոգևոր ճեմարանի հանդիսարանում, ուր կարդացվեցին երկու դասախոսություններ:

Բացման խոսք սասց հոգ. տ. Նարեկ վրդ. Ծաքարյանը:

Առաջին դասախոսությունը կարդաց Արարատյան թեմից տ. Կոմիտաս քնն. Ծիրիկյանը. «Հայ եկեղեցու երաժշտությունը, մեր ժամերգությունն ու ս. պատարագը» խորագրով:

Երկրորդ դասախոսությունը կարդաց Ծիրակի թեմից տ. Արամ քնն. Բոլաջյանը՝ «Մեր եկեղեցու երեք խորհուրդների՝ մրկրտություն, հաղորդության և պսակի մասին»:

Ժամը 15.30-ին Մայր Աթոռ ժամանած քահանաները Վեհարանի մուտքի առջև լուսանկարվեցին Վեհափառ Հայրապետի հետ:

Ժամը 17-ին միաբանական սեղանատանը հյուրերին տրվեց ճաշկերույթ:

Ժամը 18-ին ճեմարանի հանդիսարանում կարդացվեցին ևս երկու դասախոսություններ:

Առաջինը կարդաց Վիրահայոց թեմից արժ. տ. Հովհաննես քնն. Դանիելյանը՝ «Քահանայի դերը ժողովրդի մեջ՝ աշխարհի խաղաղության պահպանման գործում» թեմայով:

Երկրորդը՝ «Էջմիածին» ամսագրի խմբագիր և հոգևոր ճեմարանի ավագ դասախոս Արթուր Հատիսյանը՝ Վեհափառ Հայրապետի վերջին ողևորության միջեկեղեցական և հոգևոր-եկեղեցական ազգային

հայրենասիրական նշանակության մասին:

Բանախոսության ավարտին տ. Հուսիկ եպս. Սանթրուքյանը իր փակման խոսքում շնորհակալություն հայտնեց բոլոր ներկաներին, հաղորդեց իր ստացած տպավորությունները, հայտնեց քահանա հայրերին Է՛լ ավելի սերտացնել կապը Մայր Աթոռի հետ և բոլորին հրավիրեց Վեհարան:

Խմբովին երգված «Հայր մեր»-ով ավարտվեցին օրվա հանդիսությունները հոգեվոր ճեմարանի հարկի տակ:

Ժամը 20-ին Վեհարանի ընդունարանում Ամենայն Հայոց Հայրապետը բարեհաճել էր ընդունել քահանա հայրերին, տալու Իր հայրապետական օրհնությունները և նրանց վերադարձից հետո, իրենց հավատացյալ ժողովրդին ևս մաս տանել Մայր Աթոռ ս. Էջմիածնի օրհնությունն ու Իր բարեհաճությունները:

Ապա, Վեհափառ Հայրապետը՝ ընդառաջելով Ռուսաստանի հայոց առաջնորդ տ. Պարզե եպս. Գևորգյանի միջնորդությանը, և նրան ավելացնելով Իր հայրապետական բարձր գնահատանքը, Ռոստովի հոգևոր հովիվ արժ. տ. Մկրտիչ ավագ քնն. Չորչոփյանին պարգևատրեց վարդապետական լանցախաչով, նրա ծննդյան 80-ամյակի առթիվ:

Խոսք առնելով, արժ. տ. Մկրտիչ ավագ քնն. Չորչոփյանը շնորհակալություն է հայտնում Վեհափառ Հայրապետին՝ իրեն շնորհված այդ մեծ գնահատանքի և պարգևի համար:

Հանուն քահանա հայրերի, Ծիրակի թեմից տ. Նորայր քահանան որդիական երախտագիտությամբ շնորհակալություն է հայտնում Վեհափառ Հայրապետին՝ Նրա հարսկան ջերմ վերաբերմունքի, օրհնության համար:

Վեհափառ Հայրապետը՝ ընդառաջելով քահանա հայրերի հետաքրքրասիրության և խնդրանքին, առիթ տվեց նրանց, լսելու ԱՄՆ-ի Նյու-Յորք քաղաքում կառուցած հայոց ս. Վարդան Մայր տաճարի օծման արարողության ձայնապակը:

Քահանայից հավաքի առիթով Մայր Աթոռում կազմակերպված միջոցառումները ավարտվեցին Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով:

Ն. Ս. Օծությունը այս առթիվ բոլոր քահանա հայրերին հուշանվերներ բաժանեց:

